ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-43-ԱՈ-13
2023թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՎԱԾ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի ապրիլի 14-ին, քննարկելով դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակներում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի նիստում ներկայացնելու համար զեկուցողներ ընտրելու հարցը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 3-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-110 որոշման 13-րդ կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակներում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի նիստում ներկայացնելու համար ընտրել զեկուցողներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

2023թ. ապրիլի 14
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2023 թվականի ապրիլի 14-ի
թիվ ԲԴԽ-43-ԱՈ-13 որոշման

Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակներում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը Բարձրագույն դատական խորհրդի նիստում ներկայացնելու համար ընտրված զեկուցողներ

Բարձրագույն դատական խորհրդի զեկուցող անդամի ազգանունը, անունը:	**Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձի մասնագիտացումը, ազգանունը, անունը: (քրեական մասնագիտացման բաժին, քաղաքացիական մասնագիտացման բաժին և վարչական մասնագիտացման բաժին)**
Աթաբեկյան Արթուր	Գասպարյան Նարեկ **(վարչական մասնագիտացում)** Մուրադյան Հերմինե **(վարչական մասնագիտացում)**
Գրիգորյան Հայկ	Թորոսյան Նարինե **(քաղաքացիական մասնագիտացում)**
Թումանյանց Երանուհի	Առաքելյան Ռիմա **(քրեական մասնագիտացում)**
Խաչատուրյան Դավիթ	Մելքոնյան Մասիս **(քրեական մասնագիտացում)**
Հովսեփյան Նաիրա	Բոյաջյան Լուսինե **(վարչական մասնագիտացում)**
Մեսրոպ Մակյան	Շիլաջյան Աննա **(քաղաքացիական մասնագիտացում)**
Արշակ Վարդանյան	Սանթրոսյան Տիգրան **(վարչական մասնագիտացում)**
Քրիստինե Մկոյան	Կյուրեղյան Էդգար **(վարչական մասնագիտացում)**
Վիգեն Քոչարյան	Վարդանյան Սյուզաննա **(վարչական մասնագիտացում)**